EU4Energy

Covenant of Mayors for Climate & Energy Eastern Partnership

Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելյան գործընկերություն

Գործողություններ հանուն ավելի արդար, կլիմայապես չեզոք Եվրոպայի և Արևելյան գործընկերության տարածաշրջանի

Մենք՝ Արևելյան գործընկերության (ԱԼԳ) տարածաշրջանի համայնքապետերս, սույնով **ընդլայնում ենք մեր կլիմայական հավակնությունները** և **պարտավորվում ենք** գիտության թելադրած տեմպերով **գործողություններ իրականացնել**, որպեսզի համատեղ ջանքերով կանխենք գլոբալ ջերմաստիճանի բարձրացումը 1,5 աստիճանից բարձր՝ համահունչ Փարիզյան համաձայնագրի ամենամեծ հավակնությանը:

Տարիներ շարունակ համայնքները հնարավորությունների են վերածում **կլիմայական և բնապահպանական մարտահրավերները: Եկել է ժամանակը այն դարձնելու գերակա առաջնահերթություն:**

Որպես «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» նախաձեռնության անդամներ՝ մենք պարտավորվում ենք խրախուսել բոլորին միանալ այս շարժմանը: Մենք այնպես կանենք, որ կլիմայի ոլորտում մեր քաղաքականություններն ու ծրագրերը ներգրավեն բոլոր շահառուներին:

Կլիմայապես չեզոք ԱԼԳ տարածաշրջանի անցումն ազդեցություն կունենա մեր հասարակությունների բոլոր ոլորտներում: Որպես տեղական առաջնորդներ՝ մենք պետք է ուշադիր հետևենք այդ ազդեցություններին՝ ապահովելու արդարություն ու ներառականությունը: **Մենք կարող ենք պատկերացնել միայն այնպիսի անցում, որն արդար է, ներառական և հարգալից մեր՝ որպես աշխարհի քաղաքացիների և մեր մոլորակի ռեսուրսների նկատմամբ:**

Մեր տեսլականն այն է, որ մինչև 2050 թվական մենք բոլորս կապրենք դեկարբոնիզացված և կայուն համայնքներում՝ մատչելի, ապահով և կայուն էներգիայի հասանելիությամբ: Որպես «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության անդամներ՝, մենք կշարունակենք. (1) նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները մեր տարածքում, (2) բարձրացնել համայնքների դիմակայունությունը և պատրաստվել կլիմայի փոփոխության բացասական ազդեցություններին և (3) պայքարել էներգետիկ աղքատության դեմ:

Մենք լիովին գիտակցում ենք, որ ԱԼԳ բոլոր երկրները, տարածաշրջանները և համայնքները գտնվում են անցման տարբեր փուլերում, և որ յուրաքանչյուրն ունի իր սեփական ռեսուրսները՝ Փարիզյան համաձայնագրով սահմանված նպատակներին հասնելու համար: Մենք ևս մեկ անգամ ընդունում ենք կլիմայական ճգնաժամի հաղթահարման գործում մեր հավաքական պատասխանատվությունը: Բազմաթիվ մարտահրավերները պահանջում են ուժեղ քաղաքական արձագանք կառավարման բոլոր մակարդակներում: «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնությունն, առաջին հերթին, հանձնառություններ ստանձնած համայնքապետերի շարժում է, ովքեր կիսում են տեղական լուծումները և ոգեշնչում միմյանց այս տեսլականին հասնելու համար:

Մենք հանձնառություն ենք ստանձնում նպաստել այս գործընթացին՝ կատարելով հետևյալ գործողությունները.

1. **ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ** սահմանել միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախներ, որոնք համապատասխանում են ԵՄ-ի նպատակներին և մեր ազգային թիրախներին: Մեր նպատակն է լինելու ջանքեր գործադրել մինչև 2050 թվականը կլիմայական

EU4Energy

Covenant of Mayors for Climate & Energy Eastern Partnership

չեզոքության հավակնոտ նպատակին հասնելու համար՝ հաշվի առնելով «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» նախաձեռնության Խորհրդի կողմից սահմանված նվազագույն թիրախները[1]: Հաշվի առնելով ներկայիս կլիմայական արտակարգ իրավիճակը՝ մենք կլիմայական գործողությունները կդարձնենք մեր առաջնահերթությունը և այն կհաղորդենք նաև մեր քաղաքացիներին:

2. **ՆԵՐԳՐԱՎԵԼ** մեր քաղաքացիներին, գործարարներին և կառավարման մարմիններին բոլոր մակարդակներում այս տեսլականի իրականացման և մեր սոցիալական և տնտեսական համակարգերի վերափոխման գործընթացին: Մենք նպատակ ունենք մշակել տեղական կլիմայական համաձայնագիր բոլոր շահառուների հետ, ովքեր կօգնեն մեզ հասնել այդ նպատակներին:

3. **ԳՈՐԾԵԼ** հիմա և միասին, ճիշտ ուղու վրա կանգնելու և անհրաժեշտ անցումն արագացնելու համար: Մենք կմշակենք և կիրականացնենք մեր նպատակներին հասնելու գործողությունների ծրագիր և սահմանված ժամկետներում կզեկուցենք դրա իրականացման մասին: Մեր ծրագրերը կներառեն դրույթներ այն մասին, թե ինչպես մեղմել կլիմայի փոփոխությունը և հարմարվել կլիմայի փոփոխության հետևանքներին՝ միաժամանակ մնալով ներառական:

4. **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ** գործընկեր համայնքապետերի և տեղական ղեկավարների հետ ԱլԳ տարածաշրջանում և դրանից դուրս՝ միմյանցից ոգեշնչում ստանալու համար: Մենք կխրախուսենք նրանց միանալ «Քաղաքապետների գլոբալ դաշնագիր» շարժմանը, որտեղ էլ որ լինեն աշխարհում, եթե նրանք ընդունեն այստեղ նկարագրված նպատակներն ու տեսլականը:

Մենք՝ «Քաղաքապետերի դաշնագիրը՝ Արևելք» նախաձեռնության ստորագրողներս, հաստատում ենք, որ այսօր կարող ենք համապատասխան քայլեր ձեռնարկել (պարտավորվել, ներգրավվել, գործել, համագործակցել) ապահովելու ներկա և ապագա սերունդների բարեկեցությունը: Միասին մենք կաշխատենք մեր տեսլականն իրականություն դարձնելու ուղղությամբ:

Մենք ապավինում ենք մեր ազգային կառավարությունների և եվրոպական կառույցների աջակցությանը մեր հավակնությունների մակարդակին համապատասխան քաղաքական տեխնիկական և ֆինանսական միջոցներ տրամադրելու համար:

Արսեն Աղաբաբյան, Նոյեմբերյան համայնքի ղեկավար
Համաձայն Նոյեմբերյան համայնքի ավագանու թիվ N 175-Ա որոշման
29 / 04 / 2025թ.

(ստորագրություն)

Նոյեմբերյանի համայնքապետարան, ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4
Արսեն Աղաբաբյան, noyemberyan.tavush@mta.gov.am, +374 266 2-07-03

«Քաղաքապետերի գլոբալ դաշնագիր» նախաձեռնության մասնակից

GLOBAL COVENANT of MAYORS for CLIMATE & ENERGY

[1] Տես Հանձնառությունների փաստաթուղթը, որը մանրամասնում է ՋԳ նվազեցման նոր թիրախները, որոնք ընդունվել են ԱլԳ տարածաշրջանում Քաղաքապետերի դաշնագրին միացած համայնքների համար: